



Հասցե ՀՀ, Լոռու մարզ, ք Ստեփանավան, Երիտասարդական 47
հեռ (+374) 93315108
Էլ. փոստ info_stepanavan@aarhus.am, manya_lore@yahoo.com

N002-26

18 օգոստոսի 2015թ.

ՀՀ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Ստեփանավանի
անտառտնտեսության տնօրեն Ա. Միկոյանին
Ստեփանավանի Օրհուս կենտրոնի
համակարգող Մ. Մելիքջանյանից

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պրն. Միկոյան,

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 27.1 և 33.2 հոդվածները, ՀՀ կողմից
վավերացված Օրհուսի համաձայնագիրը և «Տեղեկատվության ազատության մասին»
ՀՀ օրենքի համապատասխան դրույթները, խնդրում եմ Ձեզ, Ստեփանավանի Օրհուս
կենտրոնին տրամադրել տեղեկատվություն հետևյալի մասին.

1. Խնդրում ենք բացատրել ինչպիսի հատումներ են կատարվում Պուշկին
անտառպետության տարածքներում:

2. Ի՞նչ նպատակով են հատվում Գյուլագարակի դենդրոպարկի
հարևանությամբ աճող ծառերը:

3. Որքա՞ն ապօրինի ծառատումներ են գրանցվել բնապահպանական
պետական տեսչության կողմից 2014, 2015թ.,

4. Ինչպիսի հակահրդեհային միջոցառումներ են կատարվում անտառային
տարածքների պաշտպանության համար,

5. Անտառվերականգնման ուղղությամբ ի՞նչ աշխատանքներ են տարվում,
ինչքա՞ն և ինչպիսի՞ ծառատեսակների տնկում է նախատեսվում:

«Տեղեկատվության մատչելիության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ
հոդվածի պահանջների համաձայն, խնդրում եմ մեր հարցմանը պատասխանել
ամբողջությամբ և 5-օրյա ժամկետում (բացառությամբ լրացուցիչ աշխատանք
պահանջող տեղեկատվության/ 30-օրյա ժամկետում):

Տեղեկատվության տրամադրմանը մերժելու դեպքում, խնդրում եմ գրավոր
տեղյակ պահել մերժման հիմքերի մասին («Տեղեկատվության ազատության մասին»
ՀՀ օրենքի 11-րդ հոդված):

Ստեփանավանի շահագրգիռ հասարակության անունից և խնդրանքով,
Հարգանով Ստեփանավանի Օրհուս կենտրոնի համակարգող

Մանյա Մելիքջանյան